

ենք որ մի ուրիշը ընթանում է նրա բոլորովին հակառակ ուղղութեամբ, իսկ մի ուրիշ տեղ մի երրորդ անձնաւորութիւն այս երկուսից մէկը կամ չափազանցութեան է հասնում կամ ոչ մէկն էլ չէ ընդունում, և այլն. այնպէս որ երկուստարութիւնը շփոթուած մնում է այս հազար տեսակ կարծիքների տոջեւ, չկարողանալով որոշել որը գերադասել: Մի ուսուցիչ՝ օրինակ՝ դպրոցում առաջ է մղում իւր կարծիքը, բայց միւս տարի՝ ուսուցչի փոխելու հետ՝ օտարացած է փոխել իւր գրութեան եղանակը նաեւ աշակերտը, մինչեւ որ մերջապէս ազատութիւնը դպրոցական գրասեղանից կամ հետեւում է մի որոշ ուղղութեան, կամ չհասկանալով ոչ մէկի նշանակութիւնը, քամու ընթացքի հետ փոփոխում է նաեւ իւր գրութեան ձեւը:

Այն այս է որ նշմարուում է մեր ամբողջ պրակտիկան մէջ քերականութեան մերթաւրդումը. այնտեղ գոյութիւն ունին այնքան կարծիքներ թէ՛ ուղղագրութեան և թէ՛ միւս քերականական ճիշդերի մէջ, որքան որ գրողներ կան: Ուրեմն շատ հասկանալի է թէ ինչո՞ւ համար մինչեւ այժմ չենք ունեցել մի կանոնադր աշխարհաբար լեզուի քերականութիւն, այն ինչ գրարարի քերականութիւն ամէն տեղ կանոնադր կերպով հրատարակուում և աւանդուում են դպրոցներում: Բայց այդ չէ նշանակում բոլորովին որ մեր լեզուն յետ է մնացել այս մասի մէջ. ու՛ր որ համբերութեամբ հետեւել է մեր գրականական լեզուի զարգացմանը, անշուշտ դժուարութիւն քաշած չի լինի նկատելու այն առաջագիմութիւնը որ արել ենք նաեւ քերականութեան մէջ: Մեր աշխարհաբարի քերականութիւնը իւր սկզբնաղբութեան մէջ և մեր այժմեան գրականութեան մէջ մի այնպիսի տարբերութիւն է կրել, որ ապահովարար կարող ենք սպասել մի մտախի ապագայի, երբ մեր նորարդողը լեզուն կը սկսի ընթանալ լեզուաբանական հաստատուն օրէնքների հիմանց վերայ, և անհեշտով մի կանոնադր քերականութիւն, հայ ուսանող երկուստարգոյթիւնը չի կրէ այն գժուարութիւնները իւր ուսումնական ընթացքի մէջ, ինչ որ տեսնուում է այժմ:

Այսպէս ուրեմն ուսանողաց գրականական լեզուն ներկայումս գտնուում է այնպիսի պարագաների մէջ, որ պէտք է ցանկալ իւր ապագայ առաջագիմութեանը: Առ այժմ ինչպէս ասացիք չէ կարող իւր ամբողջութեամբ կատարելապէս անուանել, որովհետեւ օտար լեզուի ազդեցութեան պատճառով նա՛ չունի դեռ եւս սպասած ժողովրդականութիւնը և կազմակերպուած չէ քերականական հաստատուն կանոններով. բայց թէ կարելի է յուսալ որ մի օր նա հասնի իւր զարգացման այն աստիճանին՝ որ կարողանայ կաշկի մասեւ, նագրական մարդը և կատարելապէս լեզու, այդ մենք հաստատում ենք և սպասում ամենայն ապահովութեամբ, քանի որ ունիւր մի եւ ուսնողուն և երկուստարգ ուսումնական ոյժ:

Տ. Մ.

ԻՄ ԶԱՆԱՊԱՐԱՆՈՒԹԻՒՆԵՐ

ՊԱՐԱՎԱՍՏԱՆԻ ՈՒՄ

(Շար, տես էջ 180)

Բ

ՁՈՒՆԱԿՈՒՆ ԳՆԱԶԵՆ ԻՈՅ

ԱՅՑ միջոցին մի ահագին ազադակ մեր ականջը խլացրեց. «Վայ, բեռնակ էլլին՝ Ուլաշըն էլլինայ» (վայ, օգնեցէջ Աստուծու սիրուն). իսկոյն մեր աչքի առաջ պատկերացաւ մի ստուկայ տեսարան: Մի քանի ֆերաշներ բռնած մի պարսիկ համալի օձիքից՝ անգուժ կերպով, ձեռք ու ատրք կապկապած, և քաշըշում էին և՛ դանակով ծուռ և ֆլախկում:

— «Վուրըն, աշաղաբ, օլդուրըն, ման ջուզաբաբա տմ» (խիեցէ՛ք, սղե՛ք, սպա՛նեցէ՛ք, ես պատասխանատու եմ): Այսպէս

բղաւում էր զազանի պէս անցազրական պաշ-
տօնեան՝ գլուխը խրճթի փոքրիկ զոնակից
զուրս հանած և փրփուրը բերանին: Փերաշ-
ները տիրոջ հրամանին պատրաստ, ինչպէս
որսորդի արինսխում շնեք, չորս կողմից
կրկին անգամ կատաղի յարձակում գոր-
ծեցին խեղճ մշակի վրայ, և զուցէ տեղն ու
տեղը սպանէին, թէ ես ազգու միջամտու-
թիւն չանէի: Բաւական է այլի տալ բերել
մի բանի մարդկային այս տեսակ անմեղ
գոհեր, որպէս զի հասկանալի լինի թէ ինչքան
ծանր է ինկվիզատոր և քմապաշտ պարսկի
հնարած աղէտը և մինչ չտեսնուած փաստ
պարսկաստանի մէջ անիշխանութիւնից թեւ
տաած սանձարձակ յանկարծութեան տակ գոր-
ծող ֆիդիքական ոյժը իրաւունքի ճանա-
չուելուն:

— Ինչ է պատճառը, ինչո՞ւ համար էք
ծնծում այդ խեղճ թշուառականին, ոյժը
մէթէ իրաւունք է, — հարցրի ես թրքական
լեզուով անցազրական պաշտօնեային:

— Որովհետեւ իր պարտքը չուզեց նա,
նաչել և համարձակութիւն ունեցաւ իմ կամ-
քին հակառակ քնալ, — եղաւ պատասխանը:
Կարծես Դարովինը իր մոռացուած սկզբունքով,
իր հոշակաւոր տօբիայով կենդանացաւ ա-
ռաջս: Կարծես նորէն ելած գերեղմանից՝ աշ-
խարհահոյակ զիտնականը մասնացոյց էր
ստանում մարդկային այդ զոհի — ընկճուած
թոյլի վրայ և առում լինէր ահա՜ տեսէք զօ-
րեղի խրատեմքը: . . . Այ՛, ժամանակակից
գիտութեան շուտաբանած այն բոլորովին նոր,
անողորմ պարզ և զրական բանաձեւը —
«գոյութեան կոիւր», որ սրանից 38 տարի
տաալ, այն է՝ 4859 թուին, քարոզում էր
Դարովինը հրատարակած «տեսականների ծա-
ղումն» անունով իր աշխատութեան մէջ...
Այ՛, շարունակ մի հսկայական ու անողորմ
կոխ կենանքի գոյութիւնը պահպանելու, կոխ
մի կտոր հաց, օրուայ՝ ապրուստ գտնելու
համար: Կոտի մէջ յաղթութիւնը միշտ զօ-
րեղին է պատկանում, արին հարկադրում է
լարել, գործադրել իր բոլոր ֆիզիքական կամ
թէ մտաւոր ոյժերը նպատակին հասնելու
համար: Ով՞ զօրեղ է՝ նա երջանիկ է, իրա-
ւունքը նրա ձեռքումն է. ով թոյլ է և սկալ՝

նա պէտք է զոհ դառնայ ուժեղին, առաջ-
բեզից հեռանայ: Իսկ դրա գէմ թնչ կ'առի
արգեօք բարոյագիտութիւնը, նա՛ որ զին-
վում էր զրա գէմ և դարերի ընթացքում
արծարծում էր այն միտքը, թէ «Դարվի-
նիզմը մի առանձին ստեղծագործութիւնն չէ,
ազգակցութիւն ունի աստուածների հետ և
կառավարում է բոլորովին տարբեր բացա-
րիկ օրէնքներով»:

Պարսկի պաշտօնեայի գէմքի վրա կարծես
կարգացրում էր՝ թէ՛ անպատակը արգարագ-
նում է միջոցը, ինչ ես մեղադրում եմ:

— Ինչ պարտքի մասին է ձեր խօսքը,
հարցրի պաշտօնեային զարմացած:

— Անցազրի պարտքը:

— Ինչ անցազրի. մէթէ նա՛ այդ մշակը
ուզում էր առանց անցազրի անցնել սահ-
մանը:

— Ո՛չ պարոն, անցազրի ունի, բայց
«միղէ» համար չէ ուզում տուրք վճարել:

— Վիզէ՛, չեմ հասկանում ինչ էք
ասում:

— Գիտէ՞ք, բարեկամ, — պատասխանեց
Սլամասեցի երիտասարդը պարսկի պաշ-
տօնեայի փոխնակ, — ով ծանօթ չէ մուս-
կան Պարսկաստանի, «Աստուծոյ օրհնած
այս երկրի» կարգ ու կանոնների, նա ան-
շուշտ միշտ զարմանալու առիթ պիտի տ-
նենայ. իսկ աղեղի ծանօթ բնիկների հա-
մար զրանք սովորական արկածներ կամ
առօրեայ տեղի ունեցող հասարակ պատա-
հարներ են համարվում, որոնց գէմ՝ ի հարկէ՝
պէտք է նախազգուշութիւն ունենայ, որով-
հետեւ մի ամենաթեմեւ ու չնչին գէպքն
անգամ կարող է մարդու վրասնիք ենթակել:
Այստեղ կանգը մի մազից է կախուած:
Այնքան է որ կրիայի յամբընթաց ճալլերով
հազիւ առաջ գնացող այս խաւար և կիսակիրթ
երկրի մէջ, ուր կատարեալ բացակայում է
սիստեմատիքական որոշ օրէնքների անհրա-
ժեշտ պարճարութիւնը, տեղի կ'ունենան միշտ
կաշառակերութիւն, տաւաճ, կողոպուտ,
աւերումներ, յափշտակութիւն, հասարակա-
կան զեղծութիւն, և այլն: Նոյնը կարելի է
ասել և թուրքահայաստանի համար, բայց
անարգ և դատապարտելի գործերի կնիքը

պէտք է ընդունել աւելի ընդարձակ չափով, ուստի տախտիկ էլ չլինելով յարգելի օրէնք, իրաւունք, իշխող ձեռք, արդարադատութիւն, ուղիղ խղճի ու մտքի սահմանների մէջ ճշշմարտութեան պաշտպանութիւն շարունակ անվերջ թաղարորում է կոտորած, ջարդ, մահ, սարսափ, ամայութիւն, հետեւապէս չըկայ կենսեքի, գոյքերի և երկրի ապահովութիւն . . .

— Ճիշտ է ձեր նկատողութիւնը, պատուական երիտասարդ, — ասացի ես, — ձեր ասածներէց (ինչպէս եզրակացնելի է) այստեղ Պարսկաստանում, այս դարչելի երկրում ամէն բան խաղալիք է տեղական աննպատակ անգամանքների, քմահաճոյքների ու կամայականութիւնների — տիրող կարգերը, պարսկական ձեւով խմբագրած աղաւաղած կանոնները և օրէնքները հաւասար են զերօյի: Ի՞նչ դարմանք, որ մի երկիր՝ երբ առաջադիմելու արտայայտութիւն չէ ցոյց տալիս կառավարչական կանոնաւոր օրէնսդրութեամբ, երբ միայն կաշառակեր, ստրկահողի և սինչըր պաշտօնեաների անձնական քմահաճոյքն ու կամայականութիւնն է գերակշիռ «ոյժ», և քաղաքացիական պարտաճանաչութեան իւրաքանչեւ գիտակցութիւն չէ ճանաչվում դեռ բարձր շրջաններում իսկ, անտարակոյս անձնական — սեփական զօրութիւն հաշիւները գերադասելի պիտի համարուին հասարակական շահերի նուիրագործութիւն: Ի՞նչ և իցէ, բացատրեցէք խնդրեմ՝ թէ՛ տա, այս անցագրական պաշտօնեան «վիզէի» ասելով ի՞նչ է ուզում հասկացնել:

— Ահաւասիկ բացատրեմ, բարեկամ. բայց նախ և առաջ հարկաւոր եմ համարում չղանալ համառատակի ձեզ մի բընդող գաղափար տալ Պարսկաստանում անցագրերի տուրքի ինչ եղանակով և ձեւով հաստատուելու մասին: Հիտաբըրդի է անցագրական տուրքը Պարսկաստանի մէջ, ուր ամէն տեղ առհասարակ, թէ՛ սահմանների կամ կարանտինների միայ, թէ՛ նոյն իսկ կենդանական նշանաւոր քաղաքներում ու գաւառներում, անցագրերը Պարսից կառավարութեան կողմից տրվում—տակվում է անուրդով: Ով կամենայ՝ կտրող է շատ հեշ-

տութեամբ անցագրի մեկնվածատարեան իրատեղը ձեռք բերել. եթէ ունենոր՝ է՝ առուրդի գինը կ'անկացնէ: Երեսում է պարզաբար՝ որ այստեղ դեր խաղացողը փողն է և ոչ անհատի արժանաւորութիւնը, հեշտինակութիւնը, հասակը, աստիճանը կամ հասկացողութիւնը: Պարսկաստանում ամէն բան կարելի է անել փողով և մի միայն փողով, թերեւ զարմանաք եթէ ասեմ՝ իրականապէս՝ որ մարդասպանութիւն տեղի ունեցած դէպքում՝ թափած արեան փրկանքը տակարկվում և փոխանակվում է փողի վարձատրող համաձայնական գնով: Եւստ անգամ արիւնը փոխանակ արժանաւոր պատկի հատուցման՝ անցում է անվաս, առանց հետեւանքի և անկախ օրէնքից, երբ երկու կողմից՝ սպանողի և սպանուածի՝ պահանջ յարուցանողների մէջ հաշտութիւն է կայանում: Վերջացնելով գործը փողի, անմեղածիւր — կաշառակերութեան մի յայտնի քանակի որոշմամբ, Դրա համար է՝ որ Պարսկաստանի մէջ բանաւոր խօսակցութեան նիւթը դարձած է թէ՛ 30 թումանով՝ առնվում է մարդու կենսեք՝ որպէս արեան փրկանք: Պարսկասիկի է կառավարութեան այդ տմարդի վարմունքը, որի թուլութիւնից օգտուելով յանցագործները՝ կարծես «թեւ» են առնում նոյն շարանեկ դիտաւորութիւնները անվախ շարունակելու և մարդասպանութեան ընթացքի սահմաններ և իրաւունքները անելի ընդարձակելու: Կառավարութիւնը միայն այն դէպքումն է ոճրագործներին պատժում, երբ տեսնում է երկու կողմերումն էլ ընտանեւ բար հաշտութիւն կամ համաձայնութիւն չըկայացած: Պատիժները խիստ են սահմանուած, ինկվիզիտականներ Երեսնեան սարսափի դերերն են յիշեցնում: Հրապարակով մարդու գլխատում են, ալքը հանում, բիթի կտրում, ձեռքի դատարկ արմուկից կամ որ և է մասից ոչնչացնում, «Քլախի» տակ չորացնում հաւտ սինների վրա, ամբողջ ժամերով, նաեւ գրեթէ օրերով կախած թող-

1. Պարսից թումանը օսմանական ընթացիկ հաշուով առասպական երեք բուրլուն և հաւասար իսկ դրանք միջին թւով հաշուում է 30 կոպէկ:

նում հրապարակների վրա ի տես ժողովրդը դասն՝ վախճանելու նպատակով. այս և նման բազմաթիւ գործերը ցոյց տալով խոստովանելու և օրէնքներ՝ նայած յանցանքների օրակութեան և մեղադրական կէտերին: Եթէ այսօր պարսկա՝ կաշայը թուրքահայից աւելի երջանիկ զլուծեան մէջ է, քննէք կարծում, այդ համա՝ գամանքը պէտք է վերադրել նրա բարւոք կացութեանը թէ յետաձեռնութեանը, թէ այն գոհունակ անշարժ մեղուլթեանը, որ թաղաւորում է գերեզմանատներում . . .

Այդ մասին մնական ոչինչ չեմ կարող ասել, միայն այս պատճառը կայ, որ պարսկա՝ հայը թուրքահայի նման չէ գանդատւում, գոնէ նրանց բողոքը դուք ուսանահայերը չէք լսում, հաւանական է այդ պատճառը վերա՝ գրել մարմնական խիստ պատմական ստեղծանունք օրէնքների և իրանի գահակալի հայտարարական զգացմունքով տուած և տալիք այն առանձնաշնորհումներին, որոնցով կա՝ բողոքում է մինչեւ այս օր էլ ազատ շունչ բաշել պարսկահայ համայնքը, չը նայելով միջոցառող սէյիտների ու մուլաների ներքին գրգռմունքներով Պարսից ֆանատիկոս և ոչխարային հօտի բնաւորութիւն ունեցող ամբոխի մէջ յաճախ բռնկուելիք կրօնական կարեւոր թշնամութիւններին, ցեղական ա՝ տեղութիւններին ու խօյուլութիւններին . . .

— Մարգարէ պէտք է լինել գուշակելու համար այն, — ընդհատելով երիտասարդի խօսքը, նկատեցի ես, — որ հանգամանքներին նայած, Պարսից այդ միջոցառումներն և ֆանատիկոսութեան կրակէ հնոցը հետզհետէ բարդացելով՝ կը հրդեհէ մի օր ամբողջ մա՝ գալան Պարսկաստանը, և հայերը կը լողան այն նեխուն հոսանքի մէջ, ինչ հոսանքի մէջ այժմ լողում են թեւատարած, իր բախտա՝ զուրկ եղբայրները: Իսկ գալով կաշառակե՝ րութեան՝ պէտք է ասած դա մի մեծ չարիք է Պարսկաստանի համար: Ժողովուրդը մի լաւ առած ունի այդ մասին թէ «կաշառքը մեւթ տեղն է լոյս տալիս, գոհիքի դռներ է բաց անում», և այդ ասացումով կատարեալ ճշտութիւնը տեսնելու համար՝ պէտք է անցնել Պարսկաստան . . .

— Ես ձեզ կը պատմեմ մի համագոտ

դէպք, որ տեղի է ունեցել Սալմաստի Սա՝ նամբրիկ գիւղում, և որին անձամբ աչքովս տեսնատես եմ եղել: Մի օր երկու եղբայր մի ինչ որ կաշառակեան խնդրի համար վիճում են իրարու հետ: Տաք կռուի ժա՝ մանակ փոքր եղբայրը բարկացած՝ վերաւորում է մեծին, որ երեք օրից յետ աւան՝ դում է հոգին: Փոքրին սկզբում բռնում բանդարկում են. բայց յետոյ Սալմաստի անուանի հարուստ թաղիք — բաշիներից (վա՝ ճառականագետ) մէկը հաշի — խանին, որ պատկահայերի համար սահմանուած յատուկ դատարար է, տարւով 30 թուման կաշառք՝ աղատում է բանդից, և իբր ապաշխարանք կամ քաշառքի՝ ծածուկ գիշերով փախցնում է դէպի Ռուսաստան . . .

— Հիանալի կառավարութիւն, նախանձնիք փառք, — երիտասարդի պատմածին պա՝ տասխանեցի մի հեղնակեան ժպտով: Դարձեալ անյայտ մնաց ինչ «վիզէի» նշանա՝ կութիւնը և լրիւ չպատմեցիք անցագրերի վե՝ բարեբեալ առնելիք տուրքերի սխտեմը . . .

— Ինչպէս բաղաճնեցում ու գաւառնե՝ րում, — շարունակեց Սալմաստեցի երիտա՝ սարդը, — նոյնպէս և սահմանների վրա՝ Արտապատական անցնողներին և զուստ գնա՝ ցողների համար անցագրի տալու և անցա՝ գրերի ճնշելու պաշտօնը յանձնում է ինքը կառավարութիւնը որեւէ պարսկի, թէկուզ վերջինս՝ նշանակուած պաշտօնին վայել չու՝ նենայ արժանաւորութիւն և յարմարութիւն, մինչեւ անգամ լինի անգրագէտ. կառավա՝ րութեան նպատակն է միայն առնել աճուրդի վճար (իշխարայ) տարեկան մի որոշուած քա՝ նակ, այնպէս որ անցագրերի շատ վաճա՝ ռուիլը անելի շահաւէտ է իրան՝ վերցնողի համար: Սակայն Պարսկաստանի մէջ յա՝ բատեւող բան չկայ, մէկի երջանկութեան մէջ պէտք է անմիջապէս որոնել միւսի թշուառութեան աղբիւրը . . . օրինակ, եթէ մէկը դուրս է գալիս, խնդրագրով դիմում է կառավարութեանը և անցագրի աճրագրիւր բարձրացնում՝ նախկինից՝ անպայմանաբար կարճ ժամանակամիջոցում մեծավաճառու՝ թեան իրաւունքը անցնում է նրա ձեռքը: Ահա այս տեսակ յաճախակի՝ բայց ոչ օրի՝

նական՝ փոփոխութիւնների շնորհիւ արտօ, նուաճ պարսիկ պաշտօնեաներից շատերը, որոնք այսօր տօլմալ — քիֆֆայով, փլաւ-ընտարով էին ունեցնում անյազ որկրորները և խաղում էին զընթացողընթաց փայլուն դրամ, ներէ հետ, վաղը տեսնում էք փողոցներում աննպատակ թափառելիս, այլոց զանրերն մի կտոր « Հաց » մուրալիս, կօշիկները հնացած, շորերը մաշուած գզգզուած . . . Երէկ ինչ էին նրանք, այսօր ինչ . . . Երէկ նրանք ապահով զինակ ունէին, տէր էին իրաւունքի և զլխաւոր էին տասնեակ ֆերաշների. այսօր ֆէօդալական իշխանութիւնից ընկած, նուաստացած, աղքատ, չքաւոր . . .

— Աշխարհս մի սանդուղք է, որիցիս, ասացի ես, որով մէկը բարձրանում է, միւրը ցածրանում. իսկ դրամը, ճշարդիւնաբերական հրաշագործող այդ աշուղի ոյժը, շահագործական կապիտալի անողոք բանալիւղութեան այդ թագաւորութիւնը, երկրիս երեսին տիրապետող և մարդուն ոսկեկրող՝ բայց շուտով՝ կործանող այդ երկրորդ աստուածը, որ ներկայացնում է գոյութեան կոտի մէջ հովնաստօրելու սկզբունքը, հանրային բարեբարի դերը, և մի վերին աստիճանի կոպիտ, քաղցած անձնապաշտութեան ետականութիւն, մի կտոր Հաց որոնելու համար, դա էլ նոյնպէս մի սանդուղք է՝ իբրեւ մի միջոց կամ ճանապարհ՝ դէպի տանիքը բարձրանալու. այսինքն ծրագրած նպատակին հասնելու . . .

— Երբ պաշտօնեաները, յարեց երիտաւորը, օգտուելով կառավարութեան թուլութիւնից՝ յաշողում են ձեռք բերել իրաւունքներ՝ աշխատում են այդ իրաւունքները առանձնելու օրից իսկ՝ իրանց համար շահակողութեան նպատակ և առարկայ դարձնելու Բացի օրինական անցադրերի ստանալէնքներից, առնում են միամիտ անցորդներից և մի կողմնակի, ոչ պարտուողական, առատ, պէական տուրք, որ կոչվում է « վիզէի » :

1. Վիզէի նշանակում է տեսիլ, անցադրերի քննութեան վերատուգութեան վերահսկումը ինչպէս համար և խօսքով, բայց ասիկ այդ մտքով չգէտք և հասկանալ :

Մարդ ամաշում է թուել մի առ մի անկող հիւրերի, այդ անարժան պաշտօնեաների զբաղելի արարքները Պէտք է տեսնել թէ ինչ խաղեր են խաղում խեղճ ճանապարհորդների հետ, ինչ զեղծումներ, ինչ օյնրապաշտութեաններ . . . Չուրբ եկել տարել է այն ճանապարհորդին՝ եթէ պարսիկ հպատակ լինելու զբաղաւորութիւնն ունի : Նրա հետ սկսում են լուստանքներով և հաշիւայանքներով լի անասնելի կատակներ և արաօսութիւններ անել, դիտմամբ. խնցադրերի վրայ թերութիւններ են նկատում կամ որ և է առտ, բայց իրանց երեւակայութեան մէջ իրանց հաշուով ու գաւորութեամբ արդարացի միջոց են հնարում զանազան տուգանքներ առնելու և այնպէս ճանապարհ գցելու : Այդ անցադրական պաշտօնեաները, հաւատացէք, երբեմն այնքան պատկերես են, այնքան շողորմ թէ են, այնքան կեղծաւոր, որ մարդ տկամայից զգում է : Մանաւանդ դրանց իրանց փառքը, պարծանքը, խորագէտ իմաստութիւնը խորաւնակութեան մէջ են տեսնում, որից զենք չէ անցնելով՝ դրանց մտածողական կամ հասկացողութեան հորիզոն . . .

— Խորամանկ լինել՝ կը նշանակէ պատիկ խելը ունենալ, նկատեցի ես :

— Ճանապարհորդներին ճանապարհ գցելու ժամանակ անվերջ կեղծ բարեմաղթութիւններ են շտալում նրանց հասցէին հարստահարելով ամբողջ զուրանը, իսկ ծածուկ յետեւներից կապկային միմուսութիւններ են տնում՝ կարծես աշխատելով կատարել խելկատակ ծաղրածուի աճաթալի դերը . . .

Սայմաստեցի երիտասարդի այս վերլին խօսքի վրայ՝ զեւ շարունակող աղմուկը աւելի բարձրացրեց, և մշակի ծանր. տնքոցի ձայնը խիղճս բողբոլիւն արթնացրեց. համբերութեան սահմանից անցաւ :

— Ես ձեզ ասում եմ, որ պատուիրեցէք ֆերաշներին զաղարեցնել այդ բարբարոսական գործողութիւնը, ապա թէ ոչ կ'արձանագրեմ ամէն ինչ և բոլորը կը ներկայացնեմ Արեգակնափայլ Նար-Էդին Եահին՝ հրաւիրելով ու հայցելով նրա արդարութիւնը և զթութիւնը : Կը յայտնեմ նրա արդարապատկանը ձեւ անբարեիշխութեան մասին :

որ զուգը առհասարակ շատ անխիղճ էր վար-
վում՝ ճանապարհորդներին, մանաւանդ պարս-
կաճպատակներին հետ, անխորդ անպարտա-
ւորացուցիչ երեւակայական տուրքեր տան-
լով, և որոնց զզկեցնում էր ձեր անտեղի
անվերջ պահանջներով. կը յայտնեմ և այն՝
որ զուգը անցագրերի մենապաճառութեան
իրաւունքի պատրուակի տակ, թոյլ էր տա-
լիս ձեզ անտրպար ճանապարհներով գիզել
Հարստութիւն՝ Հարստահարելով, կողպտե-
լով և կեղեքելով թշուառ մարդկութիւնը և
թագաւորը, որ իրաւունքի և արդարութեան
պաշտպան է, անշուշտ այս գէպըսմ արժանի
պատիժ կը տայ ձեզ. և. (Ստատիկ բարկա-
ցած՝ դիմելով պաշտօնեային՝ անցադիր մա-
տուցի). — Դուք սարկառօգի էք, ցած էք,
խաբերայ էք, ձեր մի կողմէ շահի համար կը
ծախէք ժողովրդին և նրան կաթնատու կովի
տեղ ընդունելով՝ կը կլթէք շարունակ, այն-
քան անգուլթ այնքան շատ՝ որ ստիւնդները
(ծծերը) վիրաւոր կը դարձնէք. Ծուռ արեւ
վերջացրէ՛ք անցագրիս քննութիւնը, չեմ ու-
զում մի բռնակ անգամ մնալ այստեղ, այժմն
իսկ պիտի ընկնիմ՝ ճանապարհ, չարկադարը
պատրաստ է. և. և.

— Ալիբա, բեր Աղի համար սուրճ, —
հրամայեց խորամանկ աղուհը իր ծառան-
րից մէկին:

— Ենթերկակալ եմ ձեր հիւրասիրութիւ-
նից, ի զուր նեղութիւն մի բաշէք, ժամա-
նակս սուղ է ևս շտապում եմ:

— Մի՛ շտապէք, աղա՛, նստեցէք, մի
քիչ խօսեցէք, մի բաժակ սուրճ անուշ արեւ:

— Ես չեմ կամենում ձեզ հետ խօսել
և ձեր լալիքը, անամօթ երեսը տեսնել:

— Մի՛ բարկանաք, ձեր խնդիրը կա-
տարուած է:

— Փերաշներ, և կանչեց նա, — ազատ
թողէք այդ համալին, ինչքան ծծեցիք բա-
ւական է, դրան քախշիչ արեւ մեր այս Աղի
արեւշատարեան (Պաշտօնեան ապա կա-
մաց կոացաւ գէպի ինձ, փսփսաց ականջիս).
Խնդրում եմ մեր թագաւորին՝ այս մասին

1. Գրանգրաստարները Պարսկաստանում ի-
րաւունք ունին աւելցակի Ծախի գիմելու:

ոչինչ չյայտնէք, — աղաչեց նա. — Ես զար-
մացայ... սուրճը մի փոքրիկ ֆնջանի՛ մէջ
տածած՝ դրին տաշմա՛ մէջ, պարսկական շող-
ջորթութիւն... Ձգիտէի ամբողջ արտից ծի-
ծաղէի՛ թէ խղճաւորէի այս յիմարական ա-
րարածների վրայ:

— Յետ ընդունեցէք սուրճը. քաղաքա-
վարութեան գէմ է՝ քանիցս անգամ կրկնել
նայնը:

— Կը խնդրեմ ընդունէք:

Ձը գիտէի ինչպէս դուրս պրծնել այս յի-
մար դրութիւնից: Բաժակը վերցրի և միան-
գամից սուրճը գետնի վրա թափեցի:

— Ախ, ինչու էք այդպէս անում, զուգ
ինձ անպատում էք, — զուգը օրօրեց պաշ-
տօնեան:

— Ինձ հիւրասիրել չէ հարկաւոր, իմ
համեստ խնդիրքն է ձեզ՝ ազատ թողնէիք
այն մշակին, որ ձեր եղբայրն է, ձեր գա-
ւանակիցն, ի զուր տեղը չը շարաբէիք. եր-
կորոյ՝ անցագրիս վրա ստորագրէիք և շուտով
տայիք ինձ՝ առանց յետաձգելու...

Պաշտօնեան լռելայն հետեւեց խօսքիս, ա-
ռաւ անցագիրը, նախ մի սուր հայեացք ձգեց
վրաս, ապա թէ նայեց անցագրին: Երբ նկա-
տեց անցագրի անծածնով գրուածը և իմ առ-
սահպատակ լինելը՝ թուղթը իսկոյն եւեթ
մօտեցրեց շրթունքներին, համարուեց և աա-
րաւ գէպի ճակատը: Դա արդէն մի նշան
էր ի նպատակ գէպի ոռոտաց կայսրութեան,
նշան՝ որով կարողացայ ըմբռնել հիւսիսային
Հզօր Արծուի հեղինակաւոր խօսքը և աղեւ-
ցութիւնը Պարսկաստանում: Հէնց միայն
իմացաւ պարսիկ պաշտօնեան իմ ոռոտա-
հպատակութիւնը, սկսեց իսկոյն եւեթ
մտերմական ու բարեկամական կերպով գա-
րուել հետս. ինչ քաղցրախօսութիւններ և
հանդիսախօսութիւններ տուէ՛ք բանեցրեց, իմ
վիրաւորանքը մեղմացնելու և իմ սիրտը շա-

1. Պարսկաստանում սովորութիւն է թէյ կամ
սուրճ խմելու համար զործածել փոքրիկ ֆնջա-
նաներ կամ բաժակներ: Պարսիկները՝ միշտ
սիրում են քաղցր խմելու շաքար այնքան եւն
չգում, որ ամբողջ բաժակը մի կամ երկու ըմ-
պուստով միայն դասարկվում է: վերջապէս:

Հելու, Բայց այդ տեսակ բազմը վարեցողու-
թիւն զլացաւ ցոյց տալու գէպի Սալմաստեցի
երկրաստարքը, որն ունէր մօտը պարսկական
անցագիրն՝ Պաշտօնեան գլխի. վայր բռնած
շարունակ նայում էր այն անցագրին և ոչինչ
չէր հասկանում, որովհետեւ անցագիրը վերց-
րուած էր անգլիական հիւպատոսարանից՝
զրուած անգլիական լեզուով, ուստի պաշտօ-
նեան տարակուսում էր՝ անգլիերէն չիմա-
նալու պատճառով. սակայն այդ տարակու-
սանքը շուտով փաքատուեց, երբ անցագրի
մտաւ ինչի ընկաւ «Առիւծ» և «Արեգակն»՝
նշանը:

— Ուրեմն դու պարսկահպատակ ես .
պէտք է ութ բուրքի (20 ֆրանկ...) տուգանք
տաս «վիզէի» համար, — ասաց ահեղ ձայ-
նով պաշտօնեան մեր Սալմաստեցի ուղեկցին,
և առօր ու փառօր մի առանձին գոհունա-
կութեամբ նստեց թախտի վրա ծալապատիկ,
այս անգամ զօռ տալով զհչրանի ծխելուն:

— Օրէնքի հր հիման վրայ էք դուք առ-
գանք պահանջում, հարցրի ես:

— Սրանց մէջ ոչինչ փաստ, ոչինչ ա-
ւարկութիւն կամ պատճառաբանութիւն չունի
արձէք. ի զուր է երկար օպատել, պէտք է
վճարեմ, — ասաց Սալմաստեցի երկտասարկը՝
ձեռքը տանելով գրպանը:

— Եսանր կաց տեղդ, ասեցի, այլ բան
է ինքնուրոյնաբար ու կամ ինքնաբերաբար
մտղի նուէր տայ սրտի բղիճածին պէս, բոլ-
րովին այլ բան է խաբուելը, ճշող ապաւ-
րութեան տակ անասելի տուգանք տալը:
Յետոյ պիտի մտքումը պարծնայ թէ ձեռք
տուայ «միամիտ» հայուն և խաբեցի...:

— Դուք սխալուել էք նախապէս, որ այդ
տեսակ անախորժութիւններէց ազատուելու
համար չէք վերցրել պարսիկ չարափաղար
— ձեռնպահ և նրա հետ սկզբից սակարկել, որ
մինչև Ստրպատական անցնելը, սահմանա-
գլխում, Արաքսի գետափի վրա տալիք տու-
գանքն էլ ինքը վճարէ. այն ժամանակ շատ

արժան էր նստել ձեզ և այնքան զխացա-
ւանք չէր լինի, որովհետեւ ձեռնպահները
և մաքսի պաշտօնեաները իրար շատ լաւ են
հասկանում... — Այս ասողն էր մի Դա-
վրիթեցի հայ վաճառական, որ առեւտրական
գործով պատարաստվում էր անցնել սահմանը
գէպի Ռուսաստան:

— Եղբայր, — ասեցի ես, լաւ էք հրա-
մայում, բայց անցել է արդէն. իսկ այժմ
անունը Բինչ տանք՝ որ ութ բուրքու տուգան-
քի ենթարկուի այս երկտասարկը անմեղ տեղ:
Իմ ամբիցեան (իմ ինքնասիրտութիւնը) չի
թոյլ տայ այդ անցագրի տուրքը վճարուած է
արդէն այնտեղը, ուր վերցրուած է նա. ու-
րեմն Բինչ հարկ կայ նորից կրկին քեզ ծախել:

— Ձեռ թողնի մի ոտ առաջ գնաս մինչև
8 բուրքին չառնեմ, — վճռողապէս հայեացք
նետելով երկտասարկի վրա՝ ասաց պաշտօ-
նեան խոժոռած:

— Ութ բուրքի, անցագրի իսկական գինը
չարձէ այդքան, Բինչ էք ասում տեսնուած
բան է... Որ այդպէս է՝ ոչ մի կոպէկ ան-
ցագրական վիզէի տուրքի անունով ձեզ չի
վճարուի, — պատասխանեցի ես արեւը զլուսն
խփած, աստիկ կատաղած թող, — ասեցի
երկտասարկին, — թող անցագրի մնայ անի-
րաւի մօտ և այնպէս՝ առանց անցագրի՝ ճա-
նապարհ ընկիր: Ես կ'աշխատեմ ուր հարկն
է իմացնել, բողոք ներկայացնել. տեսնե՞ք
առեւտրը ո՞վ կը լինի:

— Ուրախալի է, ասեց վաճառականը,
որ դուք քառաստանացի էք, որովհետեւ առ-
սահպատակներն առհասարակ մեծ պատիւ
են վայելում Պարսկաստանում, շնորհիւ Ռու-
սաց այստեղ ունեցած երկիւղալի ազդեցու-
թեան: Եթէ լինէիք պարսկահպատակ այն
ժամանակ դրանք գիտէին իրանց ինչ տեսակ
վարուելու ձեռն ձեռն այդ յանդիմանական
խօսքերի համար:

— Վերջապէ՛ք, տուէ՛ք անցագիրը, — զայ-
րացած զիմեցի պաշտօնեային:

Նա նորից նայեց անցագրին: — Չարմա-
նում եմ, ասեց, որ դուք այդպէս զեղեցիկ
էք, դէմքով գրաւել, բայց այդ մասին չկայ
յիշատակութիւն անցագրում: (Ես հեզմա-
բար ծիծաղեցի զայրոյթով լի): Այո, անցա-

1. «Առիւծ» նշանը լինում է թուրք ձեռնի
և հեռագրիներէ և արծաթ դրաններէ — պարսից
բանալիին փոխառութեան արժեքներէ վրայ:

գրի մէջ գրուած է ձեր պէմքի գծագիրը, ինչ տեսակ աչքեր ունէք, ինչ տեսակ ականջներ, բիթ, հատակ, և այլն, բայց չը կայ ձեր գեղեցկութեան նկարագիրը. չի գրուած «բէ գեղեցիկ եք»։ Այսպէս նայելով անցադրին ես նմանութիւն չեմ գտնում ձեր ընդհանուր գեղեցկութեան պիմագծութեան մէջ։

— Երեւի կարգալ չգիտէք։

— Ի՞նչպէս չէ, թիւ գրել էլ գիտեմ։

— Եթէ գիտէք, ինչպէս էք անցադիրը գլխի վայր բռնել, կամ ի՞նչ կեղծ առարկութիւն է այդ, ապացոյցեցէք անցադրիս անհակական լինելը։

— Ես միայն զանազանութիւնը տեսնում եմ գեղեցկութեան մասին, որի համար բառ չկայ այստեղ։

— Ի՞նչ բառ էք ուզում, որ լինի։

— Օրինակ՝ անցադրում բոլոր յիշուածները նման են և իսկ, բայց գրողը սխալուել է, չէ գրել «գեղեցիկ» բառը։

Հրապարակով ծագրեցի պաշտօնեային՝ բարձր բրքի՛ն արձակելով։ Կուշտ ծիծաղեցին և մեզ շրջապատող մարդիկը պաշտօնեայի այդ աղայամիտ սեթեւեթութեան վրայ։

— Ափսոս, լաւ կը կրկնէր, եթէ գրուէր անցադրի մէջ և այն թէ որքան մազ կայ գլխի վրայ... Ի՞նչ դատարկաբանութիւն... վերջ տուէք ձեր թեթեւութիւն յիմարութիւններին, ի սէր այլաչի. կամ ստորագրեցէք, Խուէք անցադիրը ինձ, կամ բացարձակապէս մերժեցէ՛ք՝ հաստատելով կեղծութիւնը։ Հակառակ դիպուածում՝ ես հարկադրուած կը լինեմ նորից անցնել սահմանը, դիմել սահմանազլխի Ռուսաց անցադրական գլխաւոր պաշտօնեային և յայտնել թէ ի՞նչպէս ուսուական օրինական անցադիրը մի ոմն պարսիկ դիտամբ աշխատում է աքօղել, կեղծել և նրա վրայ ստուեր ձգել, նոսմացնել, լաւ իմացէք, որ պատասխանատուութիւնը ծանր կը լինի... »

ԳՐԻԳՈՐ ԲԱՆԱՍԵԱՆՑ

Շարայարեւի



ՄԻ ԶԱՅՆ ԿՈՎԿԱՍՏՈՅ

ԹԻՖԼԻՍԻ «ԿՈՎԿԱՍԿԱՅԸ ԳՐԱԴԱՐԱՆԸ»

(Թանգիկ տեսութիւն)

1846 թւին մի քանի ուսու հայ բանիմաց մարդիկ մտածում. են ժողովրդական՝ գրագրարան բանալու մասին հոգալ։ Ժողովներ են անում, խորում են և վերջապէս իրագործում է։

Պ. Աղամ Բերթէ, որ գործի գլուխն է լինում, ամբողջ տասնեւհինգ տարի շարունակ գրեք է հաւաքում և յաւելում է նրանց՝ կայսրութիւնից ձեռք բերել իրաւունք՝ գրագրարան բանալու համար. Գրագրարան բանալը — այն էլ 1861 թւին, մեծ քայլ կարելի էր համարել թիֆլիսի նման մի քաղաքի համար, որովհետեւ այդ ժամանակ թիֆլիսը գրեթէ կոմկապի մէջ այնքան մեծ տեղ բռնելիս չէ եղել։

Մեր նպատակը չէ շատ հեռուն գնալ, այլ հետաքրքրուողին առաջ ալ գրագրարանի թուցիկ հաշիւը, նրա գրեքի, գտնաւորութիւնների և քանակութեան մասին։

* *

Այս ահագին Գրագրարանը ունի երեք մեծ ծանաոթ գրեքի ցուցակներ, որոնք գրագրարանի նախնական գործերն են կազմում։ Այդ ցուցակների առաջին հատորում ամփոփւած է, կովկասում լոյս տեսած բոլոր գրեքի անուններ՝ սկսած 1846 թ. մինչեւ 1861 թիւը, իմբագրութեամբ Աղամ Բերթէի, որը մեծ ժողովրդականութիւն ունէր կովկասում իրեն

* Բաղմ-Աղամ (մարտ ամիս էլ 1841) ապւած արքայական բաւար յիւան է, պիտի լինի ժողովրդական։